ՀԻՆԳԵՐՈՐԴ ԴԱՐԻ ՀԱՅ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՅՈՒՐԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ Վ. Ս. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

Հայոց գրերի ստեղծումով նոր հորիզոններ բացվեցին ազգային ինքնուրույն մշակույթի հիմքերի ամրապնդման, նրա հետագա վերելքի համար։ Գրագիտության տարածմանը զուգընթաց Մեսրոպ Մաշտոցի, Սահակ Պարթևի, նրանց աշակերտների ու հետնորդների եռանդուն ջանքերով Հայաստանում ծավալվեց իր ժամանակի համար, իրոք, եզակի չափերի գրական շարժում։ Դարի հրամայականը, հարկավ, հայալեզու գրականության ստեղծումն էր, որին վիճակված էր դառնալու զորավոր պատվար՝ ընդդեմ օտարի բիրտ տիրապետության ու միաձուլման քաղաքականության, ընդդեմ գալիք արհավիրքների։

Տարակույս չի հարուցում հայոց հին դպրության սկզբնավորման արտասովոր բնույթը. այն տեղի ունեցավ ոչ թե սովորական, աստիճանական վերընթացի, այլ զորեղ թռիչքի ձևով, որ, ինչպես հայտնի է, առհասարակ այնքան էլ հաճախ չի հանդիպում ժողովուրդների մշակույթի պատմության մեջ։ Հաղիվ թե սխալվենք, եթե ասենք, որ V դարի հայ մատենագրությունը պատկանում է համաշխարհային գրականության՝ ցարդ մինչև վերջ չվերծանված առեղծվածների թվին, երբ մանավանդ նկատի ենք ունենում երկու կարևոր հանգամանք. նախ՝ ինքնուրույն պետականությունից զրկված, հոգևոր կյանքով պառակտված, օտարների տիրապետությանը ենթակա Հայաստանի քաղաքական ծանր կացությունը, և երկրորդ՝ երբ հիշում ենք, որ տվյալ պայմաններում ազգային դպրության սկզբնավորման փուլը միաժամանակ եղավ այդ դպրության ամենաբարձր աստիճանը առաջիկա մի քանի դարերի համեմատությամբ։

Ի տարբերություն հին և միջնադարյան այլ գրականությունների (ինչպես, ասենք, ռուս), որոնց առաջացումը տեղի է ունեցել թարգմանականի հիմքի վրա, հայոց հին մատենագրությունը սկզբնավորվեց թարգմանություններին զուգընթաց, ընդամենը մի երկու տասնամյակի տարբերությամբ՝ միանգամից հրապարակ հանելով ինքնուրույն գրականության առաջին նշանավոր հուշարձանները, ի մասնավորի պատմագրության դասական ստեղծագործությունները՝ Կորյունի ու Ագաթանգեղոսի, Եղիշեի ու Խորենացու, Փավստոսի ու Փարպեցու պատմական երկասիրությունները, ինչպես և Եզնիկ Կողբացու փիլիսոփայական-աստվածաբանական հայտնի տրակտատը, որով ազդարարվեց ազգային մեծ գրականության ծնունդը։ Եվ սա հայոց հին մատենագրության սկզբնավորման ու ձևավորման պրոցեսի մի կարևոր առանձնահատկությունն է։

Հայ գրականության սկզբնավորման շրջանի դասական ստեղծագործությունների գաղափարական բովանդակության հիմնական միտումները, նրանց պատմափիլիսոփայական ու գեղագիտական որոշիչ սկզբունքները թելադրվեցին ժամանակի ազգային հասարակական-քաղաքական ու կրոնական կյանքի յուրատեսակ բարդ հանգամանքներով։

Միանգամայն ակնհայտ է V դարի դպրության վիթխարի նշանակությունը իր ժամանակի հայ իրականության համար։ Բայց նույնչափ ստույգ է նաև նրա հսկայական ազդեցությունը հետագա դարերի ազգային հոգևոր մշակույթի գրեթե բոլոր բնագավառների վրա՝ ընդհուպ մինչև ուշ միջնադար։ V դարի հայ դպրությունն ըստ էության կանխորոշեց հին և միջին դարերի ազգային պատմագրության, գեղարվեստական զարգացման, փիլիսոփայական ու գեղագիտա-

կան մտքի հիմնական ընթացքը։ Ա՛յս է, ահա, մաշտոցյան դարի հայ դպրության մեծ իսորհուրդը։

V դարի գրականությունը ստեղծվեց հին հայերենով՝ գրաբարով, որը մինչ այդ զարգացման բազմադարյան ուղի էր անցել, մշակվել, հղկվել էր որպես հեթանոս հայերի խոսակցական լեզու։ Այդ են հաստատում վաղնջական դարերի ժողովրդական բանահյուսության՝ մեզ հասած բառացի նմուշները, որոնք լեզվական առումով չեն տարբերվում հայ առաջին դասական հեղինակների ստեղծագործությունների ու առաջին հայերեն թարգմանությունների լեզվից՝ ոսկեդարյան գրաբարից, որի կատարելության փայլուն ապացույցներն են՝ արդեն V դարում, հենց այդ ինքնուրույն ստեղծագործություններն ու թարգմանությունները։ Վերջիններիս շարքում հետազոտողները հատկապես առանձնացնում են Աստվածաշունչը, որի հայերեն թարգմանությունը ֆրանսիացի հայագետ Լա Կրոզը բնութագրել է որպես «թարգմանությունների թագուհի», իսկ Ֆ. Կոնիբերն այն համարել է անգերազանցելի՝ լեզվի ճոխության, գեղեցկության, մտքերի արտահայտման ճշգրտության առումով։

Բազմաժանր է (ներառյալ նաև թարգմանությունները) V դարի հայ գրականությունը. աստվածաբանություն և մեկնություն, ջատագովություն և հայրաբանություն, կանոն և ճառ, քարոզ և թուղթ, վարքագրություն և վկայաբանություն, հոգևոր երգ և պատմագրություն։

V դարի հայ մատենագրության մեջ իր տեսակարար կշռով, արժեքով ու նշանակությամբ, ինչպես և հետագա դարերի հոգևոր մշակույթի վրա թողած ազդեցությամբ հատկապես առանձնանում է գրականության մոնումենտալ ժանրը՝ պատմագրությունը կամ պատմական արձակի ժանրը, որը իր ժամանակի համար եղավ քաղաքական-գաղափարական հզոր զենք և հարատևեց այնուհետև դարեր շարունակ՝ հանդիսանալով ժողովրդի ազգային կյանքի պատմական ու գեղարվեստական տարեգրությունը. նրա հասարակական-քաղաքական իդեալների առավել ամբողջական ու բազմաբովանդակ արտահայտությունը։ Առհասարակ իր ողջ պատմության ընթացքում հայոց հին և միջին դարերի դպրության այդ ժանրը զարմանալի «ղեկ» է եղել ժողովրդի կյանքի երևույթների նկատմամբ և իր զարգացման բոլոր փուլերում ակտիվորեն արձագանքել է իրականության առաջադրած հրատապ հարցերին։

Հայ առաջին դասական պատմիչների՝ քաղաքացիական կրքով հագեցված, ժողովրդի պատմական ճակատագրի մտահոգությամբ ամբողջովին ներթափանցված մատյաններում, իրոք, լավագույնս դրսևորվեցին ժամանակի ոգին, ժողովրդի քաղաքական կեցության ու հոգևոր կյանքի ամենակենսական պրոբլեմները, քան այդ կարող էին անել, ելնելով իրենց ժանրային նկարագրից և թեմատիկ ընդգրկման սահմանափակ շրջանակներից, մատենագրության այլ ժանրերի ստեղծագործությունները։

V դարի՝ հայ ժողովրդի պատմության այդ կարևոր շրջափուլի առաջնահերթ խնդիրներն էին՝ օտարի տիրապետության դեմ ուղղված ազատագրական պայքարը, երկրի կորցրած պետական անկախության վերականգնումը, ժողովրդի ազգային ինքնության պահպանումը, քրիստոնեության հետագա տարածումն ու արմատավորումը, որոնք և պայմանավորեցին առհասարակ հայ ազգային հոգևոր մշակույթի և մասնավորապես՝ պատմագրության ընդհանուր ուղղությունը, նրա սկզբնավորման ու ձևավորման օրինաչափությունները ու ժանրային ինքնատիպ հատկանիշները։ Այս առթիվ միանգամայն հիմնավոր է թվում հայոց հին գրականության սկզբնավորման ու ձևավորման փուլին Մ. Աբեղյանի տված՝ «եկեղեցա-քաղաքական մաքառման գրականություն» բնորոշումը։

Առաջին դասական շրջանի հայ պատմագրության համար բնութագրական է ազգային ուրույն նկարագիրը՝ ինչպես բովանդակության, այնպես էլ ժանրային յուրահատկությունների առումով։ Ճիշտ է, սկզբնավորվող հայ պատմագրությունը ստեղծագործորեն յուրացրեց հունական ու հելլենիստական, ինչպես նաև վաղ բյուզանդական պատմագրության լավագույն նվաճումներն ու ավանդները, բայց չդարձավ ո՛չ մեկի և ո՛չ էլ մյուսի պատճենավորումը։

Հայոց պատմագրությունն ինչպես իր ձևավորման փուլում, այնպես էլ զարգացման հետագա շրջանում ընթացավ սեփական ճանապարհով։

Պատմագրության ժանրի յուրահատկությունները բավական պարզորոշ ձևավորվեցին հենց նրա սկզբնավորման ու ամենաբարձր զարգացման փուլում՝ V դարի երկրորդ կեսին։ Այդ յուրահատկությունները, ժողովրդի պատմական կյանքի պայմաններին համապատասխան, տարբեր դրսևորումներով իրենց ուժը պահպանեցին նաև հետագա դարերում։

V դարի դժվարին պայմաններում, երբ հայ ժողովրդի գլխին կախված էր իսպառ բնաջնջվելու, ազգային ինքնության կորստի ու գերիշխող ազգերի հետ միաձուլվելու ռեալ վտանգը, կյանքն ավելի սուր պահանջներ էր առաջադրում ազգային հոգևոր մշակույթին, մասնավորապես դրականությանը։ Հանգամանքների բերումով հայ առաջին դասական հեղինակները, իրոք, յուրատեսակ տրիբուններ դարձան իրենց ժամանակի համար՝ մեծ պատասխանատվություն ստանձնելով ազգի ճակատագրի, իրենց ժամանակակիցների ու գալիք սերունդների առաջ։ Հնարավորին չափ վեհ գույներով ներկայացնելով անցյալի փառավոր էջերն ու հիշարժան եղելությունները, նախնիների հերոսական գործերն ու ընդօրինակության արժանի ավանդները, մեր հին պատմիչներն ամեն կերպ միտել են ժամանակակիցների մեջ արթնացնել ազգային ինքնաճանաչման ու ինքնագիտակցության բարձր գաղափարը, նրանց մեջ պատվաստել վառ հայրենասիրության ոգին, սեփական ուժերի նկատմամբ խոր հավատի գիտակցությունը, ազգի ցրված ուժերի միավորման խորհուրդը, հանգամանքներ, որ այնքան անհրաժեշտ էին քաղաքական խիստ ծանր կացության մեջ ընկած ժողովրդի փրկության համար։ V դարի հայ առաջին դասական հեղինակների նշանավոր ստեղծագործությունների գաղափարական բովանդակությունից ու ընդհանուր միտվածքից միանգամայն պարզ երևում է, որ այդ հեղինակների համար առանձնակի կարևորություն է ունեցել պասսիվական հեռանկարի հաստատումը, մի հանգամանք, որ էական չափով պայմանավորել է ոչ միայն պատմական նյութի ընտրության, ընկալման ու մեկնաբանության պատմափիլիսոփայական ելակետները, այլև այդ նյութի շարադրման, իմաստավորման գեղագիտական ուրույն սկզբունքները։ Հայ պատմիչների մեծ մասին ընդհանրապես և առաջին դասական հեղինակներին՝ մասնավորապես, միանգամայն խորթ է եղել պասսիվ հայեցողականությունը, նրանց համար պատմագրական մատյանների ստեղծումը ինքնանպատակ ու ինքնաբավ բան չի եղել։ Զևոք զարկելով անցյալի եղելությունների շարադրմանը, այդ հեղինակները չեն նպատակադրվել լոկ խնկարկելու անցյալը, չեն միտել մխիթարելու և մխիթարվելու նրա հիշատակներով։ Եվ եթե նրանց մագաղաթյա մատյաններում պատմվում, շարահարվում էին անցյալի հիշարժան եղելությունները (էլ չենք խոսում ժամանակակից անցքերի մասին), անգամ նախապատմական, վաղընջական դարերի առասպելները, վիպական զրույցներն ու ավանդությունները, այնուամենայնիվ, նրանց երկերը հուսալեցրված էին ազգի առկա կեցությանն ու ապագային, որոնցով նրանց հեղինակները ջանում էին պատասխան տալ ժամանակակից իրականության առաջ քաշած կենսական հարցերին, որոնց շարքում առաջնահերթը, հարկավ, դարի հարցերի հարցն էր՝ ազատագրական մեծ մաքառումը, ժողովրդի ճակատագրի, նրա գոյատևման պրոբլեմը։ Հեղինակային ակտիվ վերաբերմունքով ողջովին ներթափանցված իրենց ոգեշունչ մատյաններում մաշտոցյան դարի ազգային հեղինակները անցյալի մեջ համառորեն որոնում էին կործանման եզրին կանգնած հարազատ ժողովրդի փրկության ուղիներն ու գալիքի հուսատու հենարանները։ Ամենից առաջ հենց սրանով է պայմանավորված հին դարերի հայ պատմագրական հուշարձանների դերն ու նշանակությունը ժողովրդի պատմության համար, նրանց արժեքը հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի գաղափարախոսության մշակման առումով։ Այս առիթով մեծ խորհուրդ ունեն Մովսես Խորենացու՝ ազգային արժանապատվության գիտակցությամբ ներծծված խոսքերը. «Զի թէպէտ և ամք ածու փոքր, և թուով յոյժ ընդ փոքու սահմանեալ, և զօրութեամբ տըկար, և ընդ այլով յոլով անգամ նուաճեալ թագաւորութեամբ՝ սակայն բաղում

գործք արութեան գտանին գործեալ ի մերում աշխարհիս, և արժան գրոյ յիշատակի...»[1]։ Արժե վերսին վերհիշել նաև Վարդանանց պատերազմի պատմիչի՝ իր երկասիրության նպատակի բնութագրությունը, ըստ որի նրա մատյանը է «...մխիթարութիւն սիրելեաց և յոյս յուսացելոց, քաջալերութիւն քաջաց, կամակարութեամբ յարձակեալ ի վերայ մահուան...»[2]։ Առանձնապես կարևոր է վերջինը՝ «քաջալերութիւն քաջաց»։ Միանգամայն պարզ է, որ այս նպատակով գրված երկերը չէին կարող սահմանափակվել եղելությունների արձանագրային, չոր ու անկիրք շարադրանքով, չէին կարող ժամանակագրությունների կերպ ունենալ. նրանց մեջ անցյալը ներկայանում է որպես կենդանի, շնչող իրականություն։ Մաշտոցյան դարի հայ դասական առաջին պատմիչների այս նպատակադրումին առավել քան ներդաշնակում էր շարադրանքի գեղարվեստական ոճը, հուզական շեշտը, բոցաշունչ ու ոգևորիչ խոսքը, հրապարակախոսական լիցքը, առանց որի նրանց ստեղծագործությունները ցանկալի ազդեցություն չէին կարող ունենալ հասարակության լայն շրջանների վրա, կդառնային վանական վարդապետների լոկ նեղ շրջանի սեփականությունը։ Պիտի կարծել, որ մի զգալի չափով գեղարվեստական ոճի ու ճարտասանական արվեստի շնորհիվ էր, որ այդ ստեղծագործությունները դարեր շարունակ տիրական իշխանություն ունեցան ոչ միայն ժամանակակիցների, այլև հետնորդ բազում սերունդների մտքերի ու զգացմունքների վրա, դարձան հանապազ ընթերցանության մատյաններ՝ մարդկանց ուսուցանելով ոչ միայն իրենց ազգի պատմությունը, այլև նրանց ոգեշնչելով, մղելով նոր սխրանքների։ Մաշտոցյան դարի նշանավոր քերթողների սևեռուն նպատակն է եղել ժողովրդի մեջ արթնացնել վեհ գաղափարներ, վերափոխել կյանքը, հաստատել գեղեցիկի իդեալը, սերմանել անսասան հավատ բարու և ճշմարիտի հաղթանակի նկատմամբ։ Եվ միանգամայն պարզ է, որ գեղարվեստական ոճը, հռետորական բարձր արվեստն ու շունչը ոչ թե մեր հին պատմական երկերի պակասությունն է, այլ նրանց ակնհայտ առավելությունն ու արժանիքը։

Ժանրային առումով V դարի հայ պատմագրությունն, իսկապես, հատկանշվում է երկակի բնույթով։ Այդ պատմագրության երկերը պատմական արժեքավոր սկզբնաղբյուրներ լինելով հանդերձ, որ միանգամայն անտարակուսելի է, միաժամանակ հանդիսանում են մեր հին գեղեցիկ գրականության առաջին և նույնքան արժեքավոր նմուշները, որոնք օժտված են, իրոք, գեղարվեստական ստեղծագործության մի շարք բնորոշ հատկություններով՝ պատմական անձերի յուրատեսակ անհատականացում-տիպականացում (իհարկե, իր ժամանակի գեղագիտական ըմբռնումների չափանիշներով), էպիկական բարձր ոճ, հուզական ինքնատիպ լիցք, քնարական վարակիչ շնչով հագեցված գեղեցիկ հատվածներ, պատկերավոր լեզու, կենդանի երկխոսություններ, երբեմն հանդիպող բնության նկարեն պատկերներ և այլն, որ բոլոր հիմքերը տալիս է հայ առաջին դասական հեղինակների պատմական երկերը բնութագրելու նաև որպես գեղարվեստական արձակի, թերևս ավելի ստույգ՝ պատմական արձակի ստեղծագործություններ, որոնց մեջ պատմականն ու վիպականը ոչ թե մեխանիկական միացության բաղադրիչներ են, այլ հանդես են գալիս որպես ամբողջական ու ներդաշնակ համաձուլվածքի օրգանական տարրեր, ուր հաճախ անհնարին է որոշել, թե որտեղ է ավարտվում մեկը և որտեղից սկսվում մյուսը։ Ընդ որում, հարկ ենք համարում հատուկ ընդգծել, որ գեղարվեստականության ֆենոմենը բնավ չի ստվերում, չի նսեմացնում այդ նշանավոր հուշարձանների արժեքը որպես պատմական սկզբնաղբյուրների, այլ, ընդհակառակը, դրանք օժտում, հարստացնում է նոր գծերով, որոնք պայմանավորում են հայոց հին պատմագրական երկերի նշանակությունը՝ նաև ազգային գեղարվես-

---

1 Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց. աշխատությամբ Մ. Աբեղյան և Ս. Հարությունյան. Տփղիս, 1913, I, գ, էջ 10։

2 Եղիշէի Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին. ի լոյս ածեալ բաղդատութեամբ ձեռագրաց, աշխատութեամբ Ե. Տեր-Մինասեան. Երևան, 1957, էջ 4—5։

տական մտածողության սկզբնավորման ու զարգացման տեսակետից։ Եվ սա հայոց հին պատմագրության մի կարևոր առանձնահատկությունն է[3]։

Մեր հին պատմագրությունն այս հատկանիշը ամենայն հավանականությամբ ժառանգել է անտիկ (հատկապես հունական) պատմագրությունից, որի՝ ճարտասանական բարձր արվեստով գրված երկերից շատերը, ինչպես հայտնի է, միաժամանակ դասվում են նաև գեղարվեստական գրականության ստեղծագործությունների շարքը։ Այս առիթով տեղին է հիշել Ցիցերոնին, որի բնութագրությամբ պատմությունը (=պատմագրական երկը) «դա մի գործ է, որ բոլորից շատ վայել է ճարտասանին» («Opus hoc unum maxime oratorium»)[4]։ Մեկ այլ առիթով խոսելով պատմագրի ստեղծագործական աշխատանքի յուրահատկություններին մասին, Ցիցերոնը նշել է, որ գործողությունները նկարագրելիս նրա գլխավոր խնդիրներից մեկն է «ցույց տալ ոչ միայն թե ի՞նչ, այլև՝ ինչպե՞ս է տեղի ունեցել կամ սովել»[5], մի հատկանիշ, որ, ինչպես հայտնի է, բնորոշ է գրական ժանրերի ստեղծագործություններին։

Պատմագրական երկին ներկայացվող նման պահանջը իրականում պայմանավորված է եղել ժամանակի պատմագեղագիտական մտածողության յուրահատկություններով։ Անտիկ պատմագրության ու դասական բանասիրության նշանավոր մասնագետ ակադեմիկոս Ս. Ա. Ժեբելյովի դիտումով «...հընում (խոսքը անտիկ շրջանի մասին է—Վ. Ն.) պատմական ստեղծագործությանը նայել են ոչ միայն իբրև գիտական ստեղծագործության, այլև որպես գրական ստեղծագործության, և հնարավոր է, որ առաջինի նկատմամբ այս երկրորդ հանգամանքին գիտակցաբար առաջնություն է տրվել»։ Հետազոտողը դա բացատրում է նրանով, որ «հին պատմիչի ստեղծագործությունը նախատեսվում էր նախ և առաջ ընթերցանության և ապա միայն, ցանկացողների համար՝ ուսումնասիրության համար»[6]։ Անտիկ պատմագրության խոշորագույն դեմքի՝ Թուկիդիդեսի խոստովանությամբ նա իր երկը գրել է «ոչ այնքան նրա համար, որ այն բանավոր մրցակցության առարկա լինի տվյալ պահին, որքան նրա համար, որ այն լինի հավերժի սեփականությունը»[7]։ Ըստ Ե. Բեռնշտեյնի, հետևելով անտիկ հայացքներին, նույն կամ գրեթե նույն տեսանկյունով են ընկալել իրենց պատմագրական երկերի նպատակը նաև V դարի հայ պատմիչները, որոնց անցյալի փաստերը հետաքրքրում էին ոչ միայն պատմական տեսակետից, այլև գեղարվեստական հայեցակետով։ Նրանց, օրինակ, հատուկ շեշտել է այն հանգամանքը, որ իր մատյանը գրվել է որպես հանապազ ընթերցանության գիրք՝ միաժամանակ դրա հետ կապելով նրա խրատական-բարոյախոսական նպատակը։ Գորե ընծայականում, դիմելով իր պատվիրատուին՝ Դավիթ Մամիկոնյան երեցին, նա գրել է. «...զի տանապազորդ ընթեռնուցուս, լսելով զառաքինեացն զքաջութիւն, և զյետս կացելոցն զվատթարութիւն...»[8]։ Նույնքան ուշագրավ են պատմիչի խոսքերը, որով նա ավարտում է դավաճան Վասակ Սյունու անփառունակ վախճանի նկարագրության

---

3 Այս մասին տե՛ս Մ. Աբեղյան. Երկեր. հ. Գ, Երևան, 1968։ Մ. Ավդալբեգյան. Հայ գեղարվեստական արձակի սկզբնավորումը (V դար). Երևան, 1971։ Մեր՝ «Уроки армянской древности» (Ереван, 1985) գրքի «Поэтика Егишэ» հատվածը և այլուր։

4 Цицерон. О государстве—О законах. Издание подготовили И. Н. Веселовский, В. О. Горенштейн, Н. С. Утченко. М., 1966, О законах, кн. I, гл. II, с. 90։ Հմմտ. նաև՝ И. Тэн. Тит Ливий, критическое исследование. Перевод с французского Е. И. Герье. Второе исправленное издание. М., 1900, с. 17, прим. № 1.

5 Цицерон. Три трактата об ораторском искусстве. Перевод с латинского Ф. А. Петровского, И. П. Стрельниковой, М. Л. Гаспарова, под редакцией М. Л. Гаспарова. М., 1972, с. 142.

6 Фукидид. История. Перевод Ф. Мищенка, в переработке, с примечаниями и вступительным очерком С. Жебелева. Т. II, М., 1915, с. XX.

7 Նույն տեղում. հ. I, էջ 16։

8 Ղազար, էջ 4։

[illegible]

հատվածը. «Գրեցաւ յիշատակարանս այս վասն նորա, առ ի կշտամբումն յանդիմանութեան մեղաց նորա. զի ամենայն՝ որ զայս լուեալ գիտասցէ, նզովս ի հետ արկցէ, և մի՛ լիցի ցանկացող գործոց նորա»[9]։

Անդրադառնալով Թուկիդիդեսի՝ իր պատմական ստեղծագործական երդի գրական հատկանիշների մասին ունեցած պատկերացումին, Ս. Ժեբելյովը նկատել է, որ հին պատմիչի մոտեցումը ելնում էր նրանից, որ «...անտիկ, հունահռոմեական աշխարհում պատմությունը նախ և առաջ վերաբերում էր գրական մարզին և ապա միայն՝ գիտական ստեղծագործության բնագավառին, և պատմիչը հակված էր իրեն դասելու գրողների շարքը, քան՝ գիտնականների թվին»[10]։ Հետազոտողի կարծիքով, հենց գրական ձևի շնորհիվ էր ապահովվում պատմական ստեղծագործության՝ «հավերժին պատկանելու» հանգամանքը[11]։ Հիշենք Ս. Ժեբելյովի մի դիտողությունը ևս, ըստ որի «...այն պատմիչները, որոնց երկերը արդեն իսկ իրենց բովանդակությամբ գտնվում էին գրականության և գիտության սահմանում, պետք է մտահոգվեին հնարավորին չափ նրանց գրական պարուրակ տալու խնդրով։ Դա էլ հենց հանգեցրեց այն բանին, որ անտիկ գրականության պատմության մեջ պատմագրական բնույթի ստեղծագործությունները, չհաշված մի քանի բացառություններ, հավասար տեղ են գրավում բացառապես գրական խնդիրներ հետամտող ստեղծագործությունների հետ միասին»[12]։ Անտիկ պատմագրության ժանրային յուրահատկությունների, մասնավորապես նրա գեղարվեստականության մասին հետաքրքրքրական դիտարկումներ ունի նաև արվեստի և գրականության հայտնի տեսաբան Հիպպոլիտ Տենը, որ շահեկան կարող են լինել հայոց հին պատմագրության որոշակի հատկանիշները ըստ ամենայնի մեկնաբանելու առումով։ Հ. Տենի դիպուկ բնութագրությամբ «պատմիչի նկարագրած կյանքը չոր բանաձև չէ, այլ՝ բարդ դրամա, ուր օրենքները գործում են գործողությունների միջոցով» և «եթե փաստերը զրկենք նրանց կյանք տվող անմիջական կրքից ու նրանց լուսավորող կենդանի գունավորումից, ապա նրանք մեր միտքը կներթափանցեն ոչ լրիվ և ոչ ստույգ»։ «Թող բնության նման,— շարունակում է Տենը,— պատմությունն ազդի սրտի ու զգացմունքի վրա, թող բանականությամբ վերակենդանացած անցյալը հարություն առնի մեր երևակայության առջև։ Մինչև այստեղ մենք գործ ունեինք միայն մեռած նյութի ու չգործող օրենքների հետ։ Բայց, ահա, նրանք հոգու աստվածային ներշնչումով հարություն առան, շարժման մեջ դրվեցին։ Գիտությունը դառնում է արվեստ»[13]։ Հ. Տենը հատուկ շեշտել է, որ երբ խոսքը մասնավորապես վերաբերում է անտիկ պատմագրությանը, ապա այստեղ, իրոք, «պատմիչի մեջ արվեստագետին անհնար է անջատել գիտնականից», որովհետև, ինչպես կարծում է հետազոտողը, «եթե վերցնենք պատմության մեջ արվեստի տարբեր դրսևորումները, ապա կտեսնենք, որ նրանք կատարյալ են միայն գիտության կատարելության շնորհիվ, և որ կատարելության հասած գիտությունն ինքնին ծնում է կատարյալ արվեստ»[14]։

Եթե դարձյալ նկատի չունենանք առանձին բացառություններ (որոնց, ի դեպ, V դարի հայ պատմագրության մեջ, թերևս, ավելի սակավ կարելի է

---

9 Նույն տեղում, էջ 140։

10 Ф у к и д и д. Указ. соч., т. II, с. LXX.

11 Տե՛ս նույն տեղում։

12 Նույն տեղում։ Հայտնի է առհասարակ, որ հունա-հռոմեական անտիկ աշխարհում առանձնահատուկ ուշադրություն էր դարձվում գեղարվեստական ձևին ու շարադրանքի ճարտասանական կատարելությանը. անգամ բնական գիտությունների ներկայացուցիչներն էլ «աշխատում էին գրել վայելուչ կամ, գայրահեղ դեպքում՝ գրականորեն, և այդ պայմանը պահպանելու դեպքում միայն կարող էին հուսալ իրենց ստեղծագործություններով ընթերցողների լայն շրջանների հետաքրքրությունը շարժելու» (նույն տեղում)։

13 Н. Т э н. Указ. соч., с. 207—208.

14 Նույն տեղում, էջ 208—209։

հանդիպել), ապա ամենայն իրավամբ կարող ենք ասել, որ պատմագեղագիտական այս պահանջներին լիուլի բավարարում են Ագաթանգեղոսի և Եղիշեի, Փավստոսի, Խորենացու և Փարպեցու ստեղծագործությունները, որոնց մեջ, իսկապես, արվեստը ներդաշնակորեն միաձուլված է գիտությանը, անցյալ պատմությունը ներկայացված է ոչ իբրև «չոր բանաձև», այլ նման է «բարդ դրամայի», ուր «վերացականություններն ու դատողությունները» վերածված են «զգացմունքների ու կերպարների», ուր պատմության փաստերը, հիրավի, «մեռած նյութ» չեն, այլ մատուցվում են տպավորիչ ու առինքնող հուզական շեշտերով, «անմիջական կրքով», ուր, վերջապես, «բանականությամբ վերակենդանացած անցյալը» իր ողջ բարդությամբ ու կենսական գույներով ընթերցողի առջև հառնում է որպես հարաշարժ, շնչող, կենդանի իրականություն, ասես ֆերթում ես բուն գեղարվեստական երկի էջերը... Վերհիշենք, օրինակ, «Հայոց աշխարհի փափկասուն տիկիններին» քնարական մեծ շնչով հագեցած փառաբանությունը, Ավարայրի հերոսամարտի արտահայտիչ ու գունեղ նկարագրությունը՝ Եղիշեի ոսկեղենիկ մատյանից, ժողովրդական առասպելների ու այլ ստեղծագործությունների հիմքի վրա գրված բազմաթիվ գեղեցիկ հատվածներ և «Ողբը» Խորենացու «Հայոց պատմությունից», Արշակ թագավորի ինքնասպանության, Պապի դավադրական պատուհասումի ցնցող պատկերները, ժողովրդական վիպական զրույցների ու ավանդությունների խոսուն վերապատումները՝ Փավստոսի գրքից, Արարատյան դաշտի շքեղ նկարագրությունը՝ Փարպեցու «Հայոց պատմությունից», ճարտասանական բարձր արվեստով, հրապարակախոսական վարակիչ կրքով գրված նրա «Թուղթը» և այլն, և այլն։ Առանց որևէ վերապահության կարելի է ասել, որ հիշված ու չհիշված բազմաթիվ նման պատկերներում ու նկարագրություններում, իրոք, «կատարելության հասած գիտությունը ծնել է կատարյալ արվեստ»։ Միանգամայն ակնհայտ է, որ ինչպես հունա-հռոմեական անտիկ պատմագրության շատ երկերում, այնպես էլ մաշտոցյան դարի հայ դասական պատմիչների ստեղծագործություններում անհնար է գիտությունն անջատել արվեստից, գիտնական-պատմիչին՝ գրող-արվեստագետից։

Ըստ արժանվույն բարձր գնահատելով հայոց հին պատմագրության հուշարձանների արժեքը՝ պատմագիտության առումով, որոնք «իրենց մեջ ունեն շատ պատմական նյութ և թանկագին սկզբնաղբյուրներ են հայոց և ոչ միայն հայոց, պատմության հետազոտության համար», Մ. Աբեղյանը միաժամանակ միանգամայն տեղին շեշտել է, որ «դրանց ուսումնասիրությունը շատ կարևոր է նաև մեր դրականության պատմության տեսակետով»[15]։

Եթե հայոց հին պատմագրության՝ վերը բնութագրված յուրահատկությունը, նրա գեղարվեստականությունը մի կողմից առնչվում էր հունա-հռոմեական անտիկ պատմագրության ավանդներին, ապա, մյուս կողմից՝ այն թեյադրվել է հայ իրականության կոնկրետ հանգամանքներով, այն էական խնդիրներով, որ V դարի հայ կյանքը, մասնավորապես ազատագրական մեծ մարտումը դնում էր ազգային մատենագրության, հատկապես նրա առաջատար ժանրի՝ պատմագրության առջև։

Մաշտոցյան դարի պատմագրության մյուս առանձնահատկությունները ևս, ձևավորվելով հայ առաջին դասական պատմիչների մեծարժեք պատմական մատյաններում, այս կամ այն չափով հարատևեցին հետագա դարերում։

Ամենից առաջ հայ պատմիչների համար բնութագրական է ոչ թե վերացական, այլ բուսական շեշտված, եթե կարելի է ասել, ակտիվ-գործնական վերաբերմունքը պատմության նկատմամբ։ Այս առումով հատկապես ուշագրավ է Խորենացու մոտեցումը, որի կարծիքով «...ըստ աշխարհօրէն կարգաց լիմաստնանալ ասիմ, և Խաղամականս ուսանել կարգս, յորժամ զայսպիսիս ընթերցասիրիցեմք իմաստութեան ճառս և գրուցատրութիւնս, որք են Քաղ-

15 Մ. Աբեղյան. նշվ. աշխ., էջ 170։

դէացւոց և Ասորեստանեայց, Եգիպտացւոց և Հելլենացւոց...»[16]։ Ուշագրավ է, որ Քերթողահայրը շեշտը հատկապես գնում է «աշխարհական կարգերի» գիտություն ձեռք բերելու և «քաղաքական կարգեր» սովորելու վրա, պատմության դասերը հենց այս հայացքով ընկալելով, նրանց օգտակարությունը ա՛յս իմաստով հասկանալով։ Այստեղից էլ՝ հայոց հին պատմագրության գերազանցապես աշխարհիկ-քաղաքական բովանդակությունն ու ընդգծված քաղաքացիական լիցքը։

Քաղաքացիական լիցքի հետ միասին հայոց հին պատմիչների ստեղծագործություններին, իհարկե տարբեր չափով ու շեշտվածությամբ, բնորոշ է հրապարակախոսական բնավորությունը։ Իսկապես ասած, հայոց հին պատմագրությունը, որի երկերն ստեղծվել են միանգամայն որոշակի նպատակադրվածությամբ, իր էությամբ հրապարակախոսական է, ուր ամենուրեք բացորոշ արտահայտվել է հեղինակների ակտիվ ու կրքոտ վերաբերմունքը, նրանց համակրություններն ու հակակրությունները շարահարված եղելությունների, պատմական գործիչների արարքների վերաբերյալ։ Այս հանգամանքն առավել որոշակիությամբ արտահայտվել է ոչ միայն պատմական երևույթների պատճառաբանության մեջ, այլև հեղինակային շեղումների և մեծ մասամբ հասարակական բովանդակությամբ հատկանշվող նրանց սեփական զգացմունքների դրսևորումների մեջ, որոնք, հեղինակային միտումը ի հայտ բերելու հետ միասին, յուրովի նպաստում են պատմագրած նյութի, ողջ ստեղծագործության ներքին էության բացահայտմանը։

V դարի հայ պատմագրությանը հատուկ է պատմական կյանքի լայն ու բազմաղեղ ընդգրկումը։ Հայոց հին պատմագրության երկերում ժողովրդի հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական ու կրոնական կյանքի կարևոր իրողություններից բացի, բավական լայն տեղ են գտել նաև ազգագրական, աշխարհագրական, բանահյուսական և այլ կարգի բազմաթիվ ու բազմաբնույթ նյութեր, որոնք մեծապես հարստացնում, ամբողջական են դարձնում անցյալի կյանքի պատկերը։

Սակայն հայոց հին և միջին դարերի պատմագրությունն իր նշանակությամբ շատ բանով դուրս է գալիս ազգային շրջանակներից և կարևոր արժեք է ստանում համաշխարհային պատմագիտական մտքի առումով։ Բանն այն է, որ մեր պատմագրական երկերում հայ ժողովրդի պատմությունը տրվում է ոչ թե մեկուսի, այլ այն ժողովուրդների ու տերությունների պատմությանը զուգահեռ, նրանց պատմության հետ կապակցված, որոնց, հանգամանքների բերումով, այս կամ այն ձևով առնչվել է հայ ժողովուրդը հարյուրամյակներ շարունակ։ Մաշտոցյան դարի պատմագրության այս կարևոր յուրահատկությունը ևս փոխանցվեց հաջորդ դարերին։ Առհասարակ կյանքի լայն ընդգրկման շնորհիվ է, որ հայոց հին և միջին դարերի պատմագրական մատյաններում բազմաթիվ արժեքավոր, երբեմն նույնիսկ եզակի տվյալներ են պահպանվել մասնավորապես սասանյան Պարսկաստանի ու Բյուզանդիայի, վրացիների, աղվանների ու արաբների, հետագա դարերում՝ նաև խաչակիրների, թուրքսելջուկների, մոնղոլների, օսմանյան թուրքերի և այլ ժողովուրդների պատմության վերաբերյալ, որ մեծապես բարձրացնում է հայ պատմագրական հուշարձանների պատմաճանաչողական արժեքը՝ առհասարակ հանուր մարդկության պատմության գիտական ուսումնասիրության հայեցակետով։

V դարի հայ պատմագրության համար բնութագրական է նրա սերտ կապը ժողովրդական բանահյուսության հետ, որը հանդիսացավ պատմագրությանը սնող հիմնական ակունքներից մեկը, նրա հարուստ զինարանը։ Եթե V դարում մի կողմից հետևողական պայքար էր մղվում հեթանոսության մնացուկների դեմ, ապա, մյուս կողմից՝ առաջին դասական հեղինակները, ելնելով մատենագրության առջև կանգնած խնդիրներից ու նորաստեղծ ազգային գրականության միտումներից, դիմում են հեթանոս նախնիների բանավոր

---

16 Խորենացի, էջ 10։

գրականության կերտվածքներին՝ նրանից քաղելով ազգային անցյալի վերաբերյալ տվյալներ ու փաստեր։ Դրանով իսկ այդ հեղինակները հանդես են բերել իր ժամանակի համար, իրոք, բացառիկ պատմափիլիսոփայական լայնախոհություն, պատմամշակութային սթափ զգացողություն։ V դարի իրականության պահանջներով կյանքի կոչված գրականության ստեղծողների մեջ արթնացավ բուռն հետաքրքրություն ժողովրդի անցյալի նկատմամբ, և նրանց առջև բացվեց մի զարմանալի հարստություն՝ վաղնջական դարերի ժողովրդական բանարվեստի հարուստ գանձարանը։ Բանահյուսության ստեղծագործությունները, որ աչքի էին ընկնում առասպելական ու պատմական սյուժեների կառուցման արվեստով, արտահայտչական միջոցների ու ձևերի բազմազան հարստությամբ, կերպարների մեկնաբանման ինքնատիպությամբ, հայրենասիրության զգացումի բարձր դրսևորումներով, եղելությունների ընկալման ժողովրդական ուրույն հայեցակետով, միանգամայն ներդաշնակում էին պատմագրության միտումներին, առաջին հեղինակների պատմագիտական ու գեղագիտական սկզբունքներին։ Բանավոր գրականության ստեղծագործությունները ոչ միայն նպաստեցին պատմագրության աշխարհիկ ոգու ձևավորմանն ու զարգացմանը, նրա գեղարվեստական ուրույն ոճի մշակմանը, այլև գրականության մեջ բերեցին ժողովրդական մտածողության բնորոշ գծերը՝ պայմանավորելով հայոց հին գրականության գաղափարական բովանդակության ու արվեստի որոշակի յուրահատկությունները։ Համարձակ կարելի է ասել, որ առանց ժողովրդական բանարվեստի արժեքավոր ավանդների օգտագործման հազիվ թե հնարավոր լիներ այնպիսի բարձր մակարդակով, իր ողջ հարստությամբ ու կենսական գույներով իրականացնել անցյալի փառավոր էջերի ու հերոսական նախնիների կերպարների վերակենդանացումը (որ միանգամայն ներդաշնակում էր առաջին հեղինակների փայփայած իդեալներին), որին հասավ V դարի հայ պատմագրությունը։

Բանահյուսական ավանդների օգտագործման առումով որոշակի հետաքրքրություն են ներկայացնում նաև առանձին նախարարական տների տոհմական զրույցները, որոնք եթե ազգային գրականության ստեղծումից առաջ ապրում էին մի տեսակ առանձնակի կյանքով (հիմնականում, հավանաբար, տվյալ նախարարական տոհմի տիրույթի շրջանակներում), բերանացի հաղորդվելով սերնդե-սերունդ, ապա գրականության սկզբնավորման շրջանում հենց դրանք հիմնականում ձուլվեցին հայ ժողովրդի պատմության ընդհանուր հյուսվածքին, գիտակցվեցին իբրև ընդհանուրի բաղկացուցիչ մաս՝ թեև մասամբ միայն պահպանելով իրենց «տոհմական» առանձնությունը։

Հայոց հին պատմագրության՝ վերը բնութագրված յուրահատկությունը իր ցայտուն դրսևորումն է ստացել V դարի հեղինակներից հատկապես Ագաթանգեղոսի, Խորենացու և Փավստոսի պատմագրական ստեղծագործություններում։ Նույնը չեն, հարկավ, բանահյուսական հորինվածքների ընտրության, նրանց օգտագործման մեթոդներն ու եղանակները։ Դրանք պայմանավորված են տվյալ երկի նպատակով, հեղինակի դավանած պատմափիլիսոփայական ու գեղագիտական սկզբունքներով, նրա ստեղծագործական անհատականությամբ ու խառնվածքով, ժողովրդական բանարվեստի քերթվածների նկատմամբ ունեցած վերաբերմունքով։ Եթե հայոց դարձի մասին պատմագրող Ագաթանգեղոսին գերազանցապես հետաքրքրում են կրոնական լեգենդները, տեսիլքներն ու հրաշապատում զրույցները, ապա Փավստոս Բուզանդի համար, որի ստեղծագործության առանցքը երկրի աղատության գաղափարն է, առաջնահերթը հերոսավեպերն ու վիպական ավանդություններն են, իսկ իր ժողովրդի ծննդաբանությունը, ազգի տոհմագրությունը, ժողովրդի ամբողջական պատմությունը շարահյուսող Խորենացուն առավելապես գրավում են վաղնջական դարերի առասպելները, վիպասանքը, զրույցներն ու երգերը, որոնցից նա քաղում է գրավոր աղբյուրներում բացակայող տվյալները՝ քննական ճանապարհով ջանալով բացահայտել նրանց մեջ թաքնված այլաբանական ճշմարտությունները։ Ի տարբերություն Բուզանդի, որ հաճախ իր ստեղծագործության մեջ գրեթե նույնությամբ մուծում է ժողովրդական զրույցը կամ ա-

վանգությունը, Խորենացու մոտ բանահյուսական հյուսվածքների վերապատումների սեջ գտայի են հեղինակային միջամտություններն ու մեկնությունները և այլն։ Բոլոր դեպքերում բանահյուսական ստեղծագործությունները մեծ չափով հարստացրել են հայոց հին պատմագրական հուշարձանները ինչպես բովանդակության, այնպես էլ գեղարվեստական ձևի առումով։

Ժողովրդական բանահյուսության հետ ունեցած սերտ կապը ևս ժառանգվեց հետագա դարերի պատմիչների կողմից։ VII—IX դդ. պատմագրական ստեղծագործությունների շարքում այս առումով հատկապես առանձնանում են Հովհան Մամիկոնյանի, մասամբ նաև Մովսես Կաղանկատվացու պատմական մատյանները, որոնց մեջ առավել ակնբախ է երգով դրսևորվեցին V դարի պատմագրության հատկանիշները։

Մի կարևոր յուրահատկության մասին ևս։ Ինչպես V դարի, այնպես էլ հետագա դարերի պատմագրական մի շարք երկեր, թեև գրվել են առանձին նախարարական տների ներկայացուցիչների պատվերով, և թեև նրանցում ակնհայտ է այս կամ այն նախարարական տոհմի դերի բարձրացման որոշակի միտումը, բայց ամբողջությամբ վերցրած հայոց հին և միջին դարերի պատմագրական ստեղծագործություններում հայ ժողովրդի և հայոց երկրի պատմությունն ընկալվում է որպես մի միասնական ամբողջություն։ Հայ ժողովրդի և ողջ հայոց երկրի ճակատագրով խորապես մտահոգված մեր հին պատմիչների ստեղծագործություններն, իրոք, նախ և առաջ արտահայտում էին համահայկական, համազգային քաղաքական շահերը՝ գերադասելով դրանք առանձին նախարարական տների շահագրգռություններին։ Միանգամայն ակներև է այն վիթխարի նշանակությունը, որ միասնական պետականության հզորության ու երկրի ֆեոդալական մասնատվածության պայմաններում ունեցել է այս մտայնության ամուր հիմքի վրա ստեղծված ազգային պատմագրությունը՝ ողջ հայության ընդհանրական ճակատագրի, համահայկական-համազգային ընդհատարախոսության մշակման առումով։

Ընդհանուր գծերով, ահա, սրանք են V դարի հայ պատմագրության առանձնահատուկ յուրահատկությունները։

О НЕКОТОРЫХ ОСОБЕННОСТЯХ АРМЯНСКОЙ ИСТОРИОГРАФИИ V в.

Член-корр. АН АрмССР В. С. НАЛБАНДЯН

Резюме

В отличие от других литератур древности и средневековья, которые возникли на основе переводов, формирование оригинальной древнеармянской литературы происходило параллельно с переводной. Уже в V веке, сразу же после создания национальной письменности, в течение лишь нескольких десятилетий появились первые классические произведения армянской литературы—исторические труды Корюна и Агатангехоса, Егише и Хоренаци, Павстоса и Парбеци, философско-богословский трактат Езника Кохбаци, которые возвестили рождение большой национальной литературы. В многожанровой литературе V в. своей значимостью, а также воздействием на всю армянскую духовную культуру последующих веков выделяется историография, или жанр исторической прозы, которая, с одной стороны, творчески усвоила традиции античной, эллинистической и ранневизантийской историографии, а с другой—с самого начала обрела свой национальный облик и встала на собственный путь развития. Именно в V в. четко сформировались наиболее существенные особенности армянской историографии: светско-политическое содержание, грандиозный гражданский пафос и публицистическая страстность, всеармянское—общенациональное мышление, тенденция к утверждению исторической перспективы, тесная связь с устным народным творчеством, высокое художественное и риторическое искусство, широта охвата действительности, нередко выходящая за пределы национального, благодаря чему древняя армянская историография приобрела общечеловеческую ценность и всемирное значение.